ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հուլիսի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

87
(3118)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՏԱՇԻՐ ՊԻՑՑԱ»-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՐԱԾ ՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Ազգային անվտանգության ծառայության ծառայողից մինչեւ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ. այսպիսին է Տիգրան Պետրոսյանի կենսագրությունը: Նա գործող իշխանության այն առաջամարտիկներից է, ով ստանձնեց «Տաշիր պիցցա» ընկերության մասնաճյուղերի տուգանման, գործունեության կասեցման գործընթացը՝ հարյուրավոր մարդկանց թողնելով անգործ:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ Տիգրան Պետրոսյանը պաշտոնի է նշանակվել 2024 թվականի նոյեմբերի 26-ին: Պետրոսյանը պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ ձեռք բերած ունեցվածքի հայտարարագիր էր ներկայացրել, համաձայն որի՝ պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անչափահաս անդամները եւ խնամակալության տակ գտնվող անձինք միասին հայտարարագրել են 7 գույք. 3 բնակարան բազմաբնակարան շենքում, 1 ավտոկայանատեղի, 2 հողամաս, 1 անավարտ շինարարություն: Գույքերը գտնվում են Երեւանի տարբեր վարչական շրջաններում, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում: Որպես տրանսպորտային միջոց՝ հայտարարագրել են FORD եւ MERCEDES-BENZ մակնիշի մեքենաներ՝ համապատասխանաբար 2023 եւ 2024 թվականներին ձեռք բերված: Պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ առկա չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքերից հայտարարագրվել է HUBLOT ժամացույց, որի արժեքը 5,1 մլն դրամ է: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2,9 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 155 հազար դոլար, 17 հազար եվրո, 118 մլն դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 3 մլն 904 հազար դրամ՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ, որից 3 մլն 750 հազար դրամը ՀՀ վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում եղած ժամանակ է ստացել, 154 հազար 744 դրամը՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնը ստանձնած ժամանակ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ կազմել է 151 մլն 338 հազար դրամ, որի մի մասը 2 բնակարանների հիփոթեքի մայր գումարի վճարն է:

Տիգրան Պետրոսյանը եղել է նաեւ «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ:

Նա տարեկան հայտարարագրում որեւէ գույք չի հայտարարագրել, սակայն տրանսպորտային միջոցների առուծախի մեջ է եղել: Տվյալ տարվա սկզբում հայտարարագրել է տրանսպորտի 3 միջոց՝ MERCEDES-BENZ, FORD բեռնատար եւ VOLVO: Հայտարարատու տարում MERCEDES-BENZ մակնիշի մեքենան Պետրոսյանը վաճառել է 35 մլն դրամով եւ ձեռք է բերել նույն մակնիշի՝ 39,5 մլն արժողությամբ մեքենա: ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կանխիկ դրամական միջոցները կազմել են 186 մլն դրամ 335 հազար դրամ, հաշվետու ժամանակահատվածում նա ստացել է 4 մլն 699 հազար դրամ, որից 3,7 մլն դրամը «Սպասարկում» ՊՈԱԿ-ից է, իսկ 949 հազար դրամը տեսչական մարմնից:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շարունակում է ճնշում գործադրել իրավապահ կառույցների վրա՝ պահանջելով նրանցից ակտիվացնել գործողությունները Հայ առաքելական եկեղեցու դեմ: Չնայած այս ճնշումներին՝ իրավապահները դանդաղում են՝ հաղորդում տալով, թե փաստերի պակասի պատճառով շարունակական հարձակումները լեգիտիմացնել հնարավոր չէ: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ Փաշինյանի հիմնական նպատակը կաթողիկոս Գարեգին Բ-ի հրաժարականն է: Վարչապետը համոզված է, որ «եթե հաջողվի մեկ-երկու սրբազանների կալանավորել, ապա կաթողիկոսը կթեւաթափվի եւ կհեռանա ինքնակամ»: Սակայն, ինչպես կալանավայրում գտնվող Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանն էր հայտարարել՝ «եկեղեցին անպարտելի է»: Եկեղեցու ներսում հավատը մնում է ամուր, իսկ գործողությունների նկատմամբ ժողովրդի վերահսկողությունն ու զգոնությունը՝ աճող: Ըստ ամենայնի՝ Փաշինյանի այս հակաեկեղեցական արշավը դատապարտված է ձախողման. համենայնդեպս, հանրային ընկալման մեջ Նիկոլ Փաշինյանի այս հարձակումները չեն ընկալվում, քննադատվում են:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանական վերնախավը լրջագույնս պատրաստվում է հուլիսի 12-ին կայանալիք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքական ժողովին: Տեղեկացանք, որ Սյունիքում այս օրերին պատրաստվում են դիմավորել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ով որոշել է, որ այս անգամ քաղաքական ժողովը պետք է կազմակերպվի Գորիսում: ՔՊ-ամերձ մեր աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյանն է վարելու ժողովը: Մեր աղբյուրները հայտնում են, որ ողջ ՔՊ-ն իր վերնախավով՝ նախարարներ, ԱԺ ՔՊ-ական պատգամավորներ, ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահներ, տեղակալներ, խմբակցության ղեկավարը, քարտուղարը, մարզպետներ եւ համայնքների ղեկավարներ, ինչպես նաեւ տարածքային խորհուրդների նախագահներ ներկա են լինելու ժողովին: Տեղեկացանք, որ օրակարգային հարցերից լինելու է 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների հարցը, իշխանություն-եկեղեցի փոխհարաբերությունները, ինչպես նաեւ սեպտեմբերին սպասվող ՔՊ վարչության նոր կազմի ընտրությունը:

Այսօր Ազգային ժողովում նախատեսվում է արտահերթ նստաշրջան, որի մթնոլորտը, ըստ փորձագետների եւ կուլիսային աղբյուրների, լարված ու բուռն կլինի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրահանգել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներին ազատել թե՛ մտքերը, թե՛ ձեռքերը՝ բառացիորեն, եւ կտրուկ ու անմիջապես հակադարձել յուրաքանչյուր ընդդիմադիր ելույթի, որը կհնչի նիստի ընթացքում: Ըստ ԱԺ-ին մոտ կանգնած աղբյուրների՝ իշխող թիմին փոխանցվել է, որ պետք է խստիվ վերահսկեն դահլիճում հնչող ցանկացած քննադատություն եւ հարկ եղած դեպքում՝ կոշտ պատասխանեն ընդդիմադիրների ցանկացած հայտարարության: Նման մոտեցումը, ըստ քաղաքական վերլուծաբանների, խոսում է այն մասին, որ կառավարական շրջանակները մտահոգված են սպասվող ընդդիմադիր նախաձեռնություններով եւ փորձում են կանխել հնարավոր ազդեցությունը հանրային տրամադրությունների վրա: Նստաշրջանի օրակարգում ընդգրկված են մի շարք հակասական նախագծեր, այդ թվում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը գործարար-բարերար Սամվել Կարապետյանից խլելու նախագիծը, որն արդեն հասցրել է աղմուկ բարձրացնել հանրության շրջանում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՄԲՈՂՋ ՀՀ-Ն Է ՎԵՐԱԾԵԼ ՉՈՒԼԱՆԻ», ԱՐԱՅԱՆ

Այն մարդիկ, ովքեր անկախ իրենց քաղաքական հայացքներից դեմ են դուրս գալիս Նիկոլ Փաշինյանին, ես սատարում եմ նրանց, այդ թվում՝ Բագրատ Սրբազանին եւ Սամվել Կարապետյանին: Մեր պայքարը չի մարել, իսկ այս ողջ ընթացքն ուղղակի հեռախուզություն էր՝ հասկանալու, թե ով է մեզ հետ»,-ArmLur.am-ի տաղավարում ասաց «Լույսի բանակ» ռազմահայրենասիրական կազմակերպության նախագահ Կարեն Արայանը:

-Պարոն Արայան, տեսանք, որ կալանավորվեցին «Սրբազան պայքար»-ի առաջնորդներն ու մասնակիցները, ապա՝ Շիրակի թեմի առաջնորդ Միքայելը Սրբազանը: Ի՞նչ կասեք այս ամենի վերաբերյալ, ի՞նչ զարգացումների սպասել:

-Ինձ մարդու կալանավորման գործընթացը դուր չի գալիս, հատկապես՝ Փաշինյանի օրոք: Անկախ ամեն ինչից, անկախ հայացքներից, ես չեմ կարող դրա մեջ գտնել ինչ-որ հարցի լուծում: Ինձ համար իրենք բոլորն էլ մի թիմի տարբեր դիմակակիրներն են: Կալանավորման փաստը չի կարող Նիկոլին դեմ կանգնող մարդուն ուրախացնել:

-Այս անգամ տեսնում ենք, որ գործող իշխանությունների թիրախում հենց եկեղեցին եւ եկեղեցականներն են: Փաշինյանը նախ նշեց, որ եկեղեցին չուլանացված է, չուլան է հիշեցնում, ապա հայտարարեց, որ մեր բարձրաստիճան հոգեւորականները չեն պահում կուսակրոնության ուխտը, այդ թվում՝ Վեհափառը: Դուք ի՞նչ դիրքորոշում ունեք սրա վերաբերյալ: Ի՞նչ նպատակով է այս արշավը սկսվել:

-Իսկ Ազգային ժողովը միթե չուլանի վերածված չէ: Այստեղ հարցը հոգեւորական անհատները չեն. ամեն տեղ էլ վատը կա....:

-Փաշինյանն ասում է, որ պետությունը տվել է ժողովրդին, հիմա էլ եկեղեցին պետք է տա ժողովրդին: «Մաքրեմ, ազատեմ եւ տամ ժողովրդին», - ասում է նա: Ի՞նչ կարծիք ունեք Դուք:

-Կլինի եկեղեցու, թե մեկ այլ բնագավառ, սխալների մասին կարող է խոսել մարդը, որն իր ասպարեզում, իր պաշտոնում, դիրքում ամեն ինչ իդեալական է անում: Այսինքն, եթե դա աներ մեկը, որը վարչապետի պաշտոնին է եւ ամեն ինչ անում է իդեալական ու կարողանում է մեկ այլ հարթակում թերություններ գտնել, նորմալ է: Բայց այս դեպքում ինչպես չասես՝ մի քեզ նայիր, քո վիճակը նայիր, որտեղի՞ց ես եկել, ո՞ւր ես եկել, ինչի՞ ես վերածել երկիրը: Կան տեղեր, որոնք հարիր չեն եկեղեցուն, ես իմ աչքով էլ եմ տեսել, բայց ինքն այն մարդը չէ, ով իրավունք ունի դա ասելու: Փաշինյանն ամբողջ Հայաստանն է վերածել չուլանի՝ «Ալիեւի չուլանի»: Եվ ինքը թե՛ իրավական, թե՛ բարոյական առումով իրավունք չունի որեւէ կառույց վատաբանելու, հատկապես կառույց, որ ներկայացնում է հոգեւոր արժեքներն ու պատմությունը: Նա իրավունք չունի հանրային կերպով այն «չուլան» անվանելու:

Այդքան եկեղեցու համար ցավում ես՝ մի՛ բարձրաձայնիր, գնա՛, քայլ արա՛: Կոնկրետ ի՞նչ եկեղեցի ես տեսել, որ այդպես է, պատասխանատուին կանչիր, ասա՝ մաքրե՛ք: Մի՛ հանրայնացրու:

Բլոգեր լինի գնա, հանրայնացնի՝ դեռեւս հասկանալի կլինի, որովհետեւ ինքը չի կարող այնտեղ ինչ-որ բան փոխել, բայց նա, չէ որ վարչապետ է, եւ նա պիտի հրահանգ տա, որ վերացնեն, խնդիրը, հետո այդ «մաքրածը» հանրայնացնի:

Ես մի բան եմ նկատում. Փաշինյանն ուզում է այն, ինչը հայ մարդու համար թանկ է, օրինակ՝ ազգային հերոսներ, պատմություն, տարածքներ ոտնահարել, տրորել դրանք: Վարչապետի՝ կրթության եւ գիտության նախարարը բառացի ասում է՝ «հայրենասիրությունը փուչ կոնցեպցիա է», «Նժդեհը վտանգ է»:

-Բայց ի՞նչ են շահում դրանից: Նման դիրքորոշման օգուտը ո՞րն է:

-Երբ մարդը ինչ-որ մի բանից обиженк է, փորձում է ոտնահարել, դրա օգուտը ներքին բավարարվածությունն է:

Պետք է պայքարել դրա դեմ, բայց չեն պայքարում: Բոլորն օնլայն գրառումներ են անում: Պետք չէ գրառումներ անել միայն, պետք է գործել:

Երբ փորձում ես մի բան անել, բոլորը համախմբվում են ու սկսում պայքարել քո դեմ, որովհետեւ դու հաղթեցիր, ու իրենք էլ բամբասելու թեմա չեն ունենա:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ

Վրաստանում արդեն 214 օր է շարունակվում են բողոքի ցույցերը՝ ի պատասխան իշխող «Վրացական երազանք» կուսակցության որոշման՝ դադարեցնել երկրի ԵՄ ինտեգրման գործընթացը: Ցուցարարները շարունակում են արգելափակել Թբիլիսիի Ռուսթավելու պողոտան, որտեղ գտնվում է խորհրդարանի շենքը: Զուգահեռաբար բողոքի ակցիաներ են անցկացվում Վրաստանի այլ խոշոր քաղաքներում:

«Վրացական երազանք»-ի իշխանությունները, որոնց լեգիտիմությունը կասկածի տակ է դրվել 2024 թվականի հոկտեմբերի 26-ի վիճահարույց խորհրդարանական ընտրություններից հետո, բռնի ուժով են արձագանքում բողոքի ցույցերին, հայտնում են ցուցարարները:

Միակուսակցական խորհրդարանը ընդունել է մի շարք ճնշող օրենքներ՝ ուղղված ընդդիմության, անկախ լրատվամիջոցների եւ քաղաքացիական հասարակության դեմ: Տասնյակ մարդիկ, այդ թվում՝ ցուցարարներ, ընդդիմության առաջնորդներ եւ լրագրող Մզիա Ամագլոբելին, ձերբակալվել են եւ մնում են բանտում:

Նախկին նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, դիմելով Ռուսթավելու պողոտայում հավաքված հարյուրավոր ցուցարարներին, հայտարարել է. «Ռեժիմը չի հաղթում, եւ դա ակնհայտ է՝ դատելով նրանից, որ դուք դեռ այստեղ եք: Մեր պատասխանը նրանց գործողություններին կարող է լինել միայն մեկը՝ միասնություն»:

Ընդդիմության հիմնական պահանջներն են՝ քաղբանտարկյալների ազատ արձակում, «Վրացական երազանք»-ի կառավարության հրաժարական եւ նոր ընտրությունների անցկացում:

Ընդդիմադիր գործիչ Էլենե Խոշտարիան, ով հացադուլ է հայտարարել, պատրաստ է դադարեցնել այն, եթե ընդդիմությունը համաձայնի բոյկոտել 2025թ. հոկտեմբերին նախատեսված տեղական ինքնակառավարման ընտրությունները:

Հիշեցնենք, որ «Հանուն Վրաստանի» կուսակցության նախագահ Գիորգի Գախարիան ներկայումս գտնվում է երկրից դուրս: Հինգ ընդդիմադիր առաջնորդներ դատապարտվել են ազատազրկման՝ Ցուլուկիանիի հանձնաժողովին ներկայանալուց հրաժարվելու համար:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԸ ԳՈՐԾՈՒՂՎՈՒՄ Է ՄԱԴՐԻԴ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուլիսի 2-5-ը ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին գործուղել է Մադրիդ:

Մենք տեղեկացանք, որ Ավանեսյանը Իսպանիայի Թագավորությունում պետք է մասնակցի 14-րդ Հայկական համաշխարհային բժշկական համաժողովին: Նշենք, որ նախօրեին առողջապահության նախարար Ավանեսյանը, որը վերջերս է դարձել ՔՊ-ական, Նիկոլ Փաշինյանին ուղեկցում էր Տավուշի մարզում: Ավելին՝ Ավանեսյանը Պարզ լճի տարածքում անցկացված «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարի եզրափակիչ փուլում ակտիվ մասնակցություն ունեցավ: Թե Ավանեսյանն ինչ կապ ուներ այս մրցաշարի հետ, անհայտ է, բայց ակնհայտ է, որ առողջապահության նախարարն ամեն բան անում է Փաշինյանի բոլոր միջոցառումներին ներկա գտնվելու համար, եթե այն անգամ կապ չունի իր ղեկավարած ոլորտի հետ:

ՀԱՐՑԸ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՉԻ ԼԻՆԻ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մեկնարկող Կառավարության նախաձեռնած Ազգային ժողովի արտահերթ նիստում ընդգրկված է ՀԷՑ-ի պետականացման նախագիծը:

Նախագծի հեղինակը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն է, հիմնական զեկուցողը՝ Ազգային ժողովի պետական իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը:

Կառավարության նախաձեռնած արտահերթ նիստում ընդգրկված է նաեւ տուգանք՝ տրանսպորտային միջոցից օգտվելիս չվճարելու համար օրենսդրական նախագիծը:

Ընդհանուր Կառավարության օրակարգում ընդգրկված է 22 նախագիծ, որոնք պետք է առաջին եւ երկրորդ ընթերցում անցնեն, 24 ժամվա ընթացքում ընդունվեն:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին ու խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանի անձեռնմխելիությունից զրկելու օրենքի նախագիծն այս արտահերթ նիստում չի քննարկվելու: Կառավարությունը կավարտի իր օրակարգը, որից հետո նոր Ազգային ժողովը նոր օրակարգով արտահերթ նիստեր կգումարի՝ արդեն մյուս շաբաթ:

ԲԱՔՈՒՆ ՍՊԱՍՈՒՄ Է

Իրանը պահանջում է խիստ պատիժ Բաքվի համար՝ անմեղ իրանցիների սպանությանը մասնակցելու համար: Այս մասին նշել է քաղաքագետ Էհսան Մովահեդիանը: «Բաքուն սպասում է, որ Իսրայելը կրկին հարձակվի Իրանի վրա, որպեսզի այս անգամ Աստարայի, Նախիջեւանի, Ղարաբաղի սահմանին տեղակայված սիոնիստական եւ Բաքվի ուժերը հարձակվեն Իրանի վրա»,- գրել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԻՉԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը հայտնել էր, որ Միքայել Սրբազանին մեղադրանք առաջադրած քննիչը հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարեւոր գործերով քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վաչե Մխիթարյանն է, ով 2021 թվականին պարգեւատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով: ՀԿԳ ավագ քննիչը 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիր է ներկայացրել, որի համաձայն՝ 2004 թվականին քննիչը ձեռք է բերել բնակարան Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում, համատեղ սեփականությամբ: Մխիթարյանը սեփական տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն ունի սեփականության իրավունքով իրեն չպատկանող, բայց իր կողմից շահագործվող DODGE մակնիշի մեքենա: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 265 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 276 հազար դրամ, հաշվետու տարվա եկամուտը կազմել է 13 մլն 497 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Քննչական կոմիտեից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14 մլն 629 հազար դրամ:

ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ

2025 թվականի մայիսին 2024 թվականի մայիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գների մակարդակը նվազել է 0.1%-ով, իսկ 2025 թվականի ապրիլի համեմատ արձանագրվել է 0.1% գնաճ: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է ՀՀ Վիճակագրական կոմիտեից: Հանրապետության դիտարկվող 9 բնակավայրերում 2025թ. մայիսին ապրիլի համեմատ սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.3-2.8%-ով (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել ք. Գյումրիում), իսկ Երեւան եւ Հրազդան քաղաքներում գրանցվել է 0.1% գնանկում: Մակարոնեղենի գինը 2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ աճել է 3.2%-ով, հացինը՝ 3.9%-ով,

ալյուրինը՝ 6.9%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 2.6%, 0.7%, 1.6%-ով:

2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է տավարի, խոզի եւ գառան մսերի՝ համապատասխանաբար 0.8%, 1.1%, 2.9%, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ 0.1%, 1.0% եւ 0.5% գնաճ:

Մարգարինի եւ կարագի գները 2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ աճել են 0.3% եւ 13.1%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ 0.9% եւ 0.2%-ով:

2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ պաղպաղակի գինն աճել է 4.0%-ով, շոկոլադինը՝ 14.1%-ով, սուրճինը՝ 14.9%-ով, կակաոյինը՝ 20.9%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 3.0%, 0.9%, 0.3% եւ 1.0%-ով:

Շաքարի եւ շաքարավազի ապրանքախմբում 2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ գները նվազել են 3.1%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ արձանագրվել է 0.6% գնաճ:

Ձավարի գինը 2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ նվազել է 4.9%-ով, պանրինը՝ 2.8%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ արձանագրվել է՝ համապատասխանաբար 2.0% եւ 0.2% գնաճ:

ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ՓՈՂՈՑ ԵՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ

Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդը հուլիսի 12-ին իրականացնելու է մեծ հանրահավաք, ինչպես Խորհուրդն էր նախօրոք հայտարարել, տարբեր հանդիպումներից պարզ դարձավ, որ բոնի տեղահանված արցախցիները վճռական են եւ պատրաստ պայքարի: Հանրահավաքը մեկնարկելու է Ազատության հրապարակից, առա մասնակիցները երթով շարժվելու են դեպի պետական հաստատություններ եւ իրականացվելու են զանգվածային անհնազանդության ակցիաներ: «Մենք հաստատակամ ենք մեր խոսքերում եւ չենք շեղվելու մեզ հանձն առած ուղուց:

Մեր նպատակն է ապահովել համախմբված, համակարգված եւ արդյունավետ համագործակցություն՝ հանուն ընդհանուր նպատակի»,- ասված էր հայտարարության մեջ:

Խորհուրդը նաեւ կոչ է անում Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, Սփյուռքի բոլոր կազմակերպություններին, արցախյան եւ հայաստանյան հասարակական կազմակերպություններին ու քաղաքական ուժերին, Արցախի իշխանություններին եւ համայն հայ ժողովրդին միավորվել Արցախի գաղափարի շուրջ եւ Արցախի հարցը դարձնել համահայկական օրակարգ:

«Մեր օրակարգը պաշտպանողները պիտի լինեն մեզ հետ, մեր կողքին:

Հիշենք՝ 1988-ին, նույն ոգով, նույն գաղափարով, նույն վճռականությամբ Արցախի զարթոնքն սկսվեց ժողովրդի ընդվզմամբ: Այսօր այդ նույն ոգին արթուն է»,- գրված էր հայտարարության մեջ: 2020 թվականից եւ 2023 թվականից առ այսօր արցախահայությունը տարբեր ակցիաներ է իրականացրել, ինչպես նաեւ մասնակիցը դարձել, որ բոլոր այն ակցիաներին, որոնք ուղղված են եղել Արցախի հիմնախնդրին, Բաքվում պահվող ռազմագերիների, արցախցիների վերադարձի եւ Հայաստանում արցախահայության սոցիալական խնդիրների լուծմանը, սակայն առ այս պահ որեւէ խնդրին լուծում չի տվել ՀՀ գործող իշխանությունը:

Ընդհակառակը՝ ՀՀ գործող իշխանությունն ամեն կերպ փորձել է եւ փորձում է լռեցնել արցախցիներին՝ նրանց նկատմամբ տարբեր միջոցներ կիրառելով:

Հիշեցնենք, որ քաղաքական հետապնդման ենթարկվեցին Ստեփանակերտի, Մարտունու, Մարտակերտի քաղաքապետերը, պարբերաբար հարցաքննության է հրավիրվում Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը, վերջերս նաեւ ԱՀ ԱԺ նորընտիր նախագահ Աշոտ Դանիելյանը, ԱՀ ԱԺ պատգամավորներ:

Հիշեցնենք նաեւ այն, որ վերջերս «Սրբազան պայքարի» մի շարք մասնակիցների հետ կալանավորվեց նաեւ ԱՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանը:

Արցախի պետնախարար Նժդեհ Իսկանդարյանն անթույլատրելի է համարել նման գործողություններն ուղղված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ նրան հոգեւոր ծառայություն մատուցող հոգեւորականների նկատմամբ: Նա դատապարտել է այս գործողությունները՝ որակելով դրանք «հակահայկական» եւ «հակազգային»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱԿՐՈՆԻ ԵՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԶՐՈՒՅՑԸ

«Փաշինյանին հայտնեցի, որ Ֆրանսիան համերաշխ է ՀՀ Կառավարության հետ հայկական ժողովրդավարությունը ապակայունացնելու փորձերի դեմ պայքարում», - գրել է Էմանուել Մակրոնը: «Վերահաստատեցի մեր աջակցությունը նրա խիզախ ջանքերին՝ Ադրբեջանի հետ խաղաղության հասնելու եւ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու համար: Խաղաղությունն ու բաց սահմանները կարեւոր իրադարձություն կլինեն ամբողջ տարածաշրջանի համար եւ օրինակ՝ ուրիշների համար»,- նշել է Ֆրանսիայի նախագահը: Ավելի վաղ հայտնել ենք, որ տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

ԿԱԼԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆ Է ԺԱՄԱՆԵԼ

Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Կայա Կալասն ասել է, որ Հայաստան է ժամանել հստակ ուղերձով: ԵՄ-ը երբեք այսքան մոտ չի եղել Հայաստանին, ասել է Կալասը: Վերջին տարիների բարեփոխումների հաջողությունը նշելով՝ ԵՄ ներկայացուցիչը վստահեցրել է, որ պատրաստ է խորացնել համագործակցությունը տարբեր ոլորտներում: Որպես ֆինանսական օգնություն՝ նա նշել է 2024-27թթ. բիզնես օգնության ծրագիրը՝ 270 մլն եվրոյի չափով, տեղահանված անձանց սոցիալական օգնության օգնությունը: ԵՄ գերագույն ներկայացուցիչը նշել է մարդկանց միջեւ շփումների, վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսության զարգացման կարեւորությունը: Կալասը նշել է ԵՄ գործունեությունը խաղաղության եւ կայունության խթանման ուղղությամբ, որի հետ կապված ընդգծել է «ԵՄ առաքելության կարեւոր դերը»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

ՀԱՊԿ անդամ երկրները շարունակում են Հայաստանին համարել կազմակերպության լիիրավ անդամ, սակայն այս կարգավիճակը ենթադրում է կազմակերպության շրջանակներում բոլոր պարտավորությունների կատարում: Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստից հետո: «Մենք շարունակում ենք Հայաստանին համարել այս կազմակերպության լիիրավ անդամ, սակայն, իհարկե, լիիրավ անդամակցությունը ենթադրում է մասնակցություն եւ ՀԱՊԿ կանոնադրական փաստաթղթերից բխող բոլոր պարտավորությունների կատարում, այդ թվում՝ անդամավճարների վճարումը»,-ասել է նախարարը: Միեւնույն ժամանակ, նա նշել է՝ ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի մասնակիցներն ի գիտություն են ընդունել, որ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը կրկին հրաժարվել է մասնակցել այս միջոցառմանը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐ

Թուրքիայի գյուղատնտեսության եւ անտառային տնտեսության նախարար Իբրահիմ Յումաքլին հայտնել է, որ վերջին երկու օրվա ընթացքում երկրում գրանցվել է 150 խոշոր հրդեհ, որոնցից վեց դեռեւս շարունակվում են: TRT Haber հեռուստաալիքի փոխանցմամբ, երեք հրդեհ առավել մեծ վտանգ է ներկայացնում՝ տարածման սպառնալիքի պատճառով: Այդ կապակցությամբ Սաքարիա նահանգի երկու շրջան եւ Բիլեջիքի 11 գյուղ տարհանվել են: Ընդհանուր առմամբ հրդեհի գոտուց տարհանվել է ավելի քան 300 մարդ: «Նահանգապետի հրամանով ձերբակալվել է 19 անձ, ովքեր կարող են առնչություն ունենալ հրդեհների բռնկման հետ», - նշել է Յումաքլին: Նախարարը հայտնել է, որ մնասների մասին տվյալները կհրապարակվեն հրդեհները լիովին մարելուց հետո:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԳՈՐԾՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՃԱՆԱՉՎԵԼ Է «ՈՉ ՊԻՏԱՆԻ»

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ավարտվել է բժիշկ-ռադիոլոգի կողմից իրավունք վերապահող բժշկական փաստաթուղթ կեղծելու դեմքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկացնում է ՀՀ քննչական կոմիտեն:

«Քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ զորակոչիկը 2023 թվականի նոյեմբերի 10-ին հետազոտվել է բժշկական կենտրոնում, որի ժամանակ վերջինիս մոտ իբրեւ թե ախտորոշվել է այնպիսի հիվանդություն, ինչը հիմք է տվել զինկոմիսարիատի զորակոչային բժշկական հանձնաժողովին՝ արձանագրելու, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ցանկի համաձայն, Լ.Մ.-ն պիտանի չէ զինվորական ծառայության համար:

Բժիշկ-ռադիոլոգի տված ախտորոշման իսկությունը պարզելու նպատակով նշանակվել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն: Ստացված եզրակացության համաձայն՝ զորակոչիկի մոտ նման հիվանդություն չի հայտնաբերվել, որով էլ հիմնավորվել է բժիշկ-ռադիոլոգի կողմից կեղծ բժշկական փաստաթղթի պատրաստման փաստը:

Նախաքննության ընթացքում բժիշկ-ռադիոլոգի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ», - ասված է հաղորդագրության մեջ:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂԻՆ ԳՏԵԼ ԵՆ

Նախօրեին համայնքային ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողները ստացել են օպերատիվ տեղեկություն, որ Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից հետախուզվող մի տղամարդ Բագրատաշենի անցակետով մուտք է գործելու Հայաստան: Նույն օրը Բագրատաշենի անցակետում 28-ամյա տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է համայնքային ոստիկանության Նոյեմբերյանի բաժին: Տղամարդը դատապարտվել էր՝ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարած գողության համար: Ավելի ուշ դատարանը որոշում էր կայացրել պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու եւ պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին, եւ անցած տարվա դեկտեմբերից նա գտնվում էր հետախուզման մեջ. ընտրված խափանման միջոցը կալանքն էր:

ԿԱՇԱՌՔ՝ ՉԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ԴԻՄԱՑ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված նյութերի հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ 2024-2025 թվականներին Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի երկու պաշտոնատար անձինք նախնական համաձայնությամբ, նախապես տեղյակ լինելով նույն վարչական շրջանում գործող սուպերմարկետների, հյուրանոցային համալիրների, ինչպես նաեւ տարբեր խանութների, գազալցակայանների, հանրային սննդի կետի եւ մի շարք այլ շինությունների վրա ապօրինի փակցված գովազդային վահանակների առկայության մասին, դրանք չապամոնտաժելու եւ իրավախախտումները չարձանագրելու համար հիշյալ տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներից մի շարք անձանց օժանդակությամբ պահանջել եւ ստացել են տարբեր չափերի կաշառք:

Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ նախաքննությամբ պարզվել է, որ նշված պաշտոնատար անձանցից մեկը, նախապես տեղյակ լինելով տվյալ վարչական շրջանում հյուրանոցային գործունեությամբ զբաղվող անհատ ձեռնարկատիրոջ՝ աշխատելու թույլտվության (լիցենզիայի) բացակայության եւ սահմանված պետական տուրքը համայնքապետարանին վճարված չլինելու մասին, 2024 թվականի դեկտեմբերի 27-ին նրանից պահանջել եւ ստացել է կաշառք՝ իրավախախտումը չարձանագրելու եւ ԱԶ-ի աշխատանքներին չխոչընդոտելու համար:

Պաշտոնատար անձանց՝ վերը նշված ապօրինի գործողությունների հետեւանքով համայնքապետարանի բյուջե չի վճարվել ընդհանուր շուրջ 2 մլն ՀՀ դրամ: Կաշառք ստանալու, դրան օժանդակելու եւ կաշառք տալու համար նախաքննության ընթացքում մեղադրանքներ են ներկայացվել 13 անձի, այդ թվում՝ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի պաշտոնյաներին: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՀԻՄՔՈՎ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ 2004-2011 թթ. ընթացքում ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած անձը, մտերիմ հարաբերությունների մեջ գտնվելով Ս. Մայրապետյանի հետ, 2006 թվականի հոկտեմբերի 20-ին նրանից որպես սեփականություն ընդունելով 186,48 քմ մակերես ունեցող՝ Երեւան քաղաքի Աբովյան փողոցի 8-րդ շենքի 13-րդ բնակարանը, չի կատարել իր ծառայողական պարտականությունները: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացել է Հակակոռուպցիոն կոմիտեից:

«Մասնավորապես՝ պարզվել է, որ ՀՀ Կառավարության՝2007 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ Երեւան քաղաքի Աբովյան 10 հասցեում գտնվող 1250 քմ ընդհանուր մակերեսով շենքը եւ 56 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակը ուղիղ վաճառքով օտարելու մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունները Ս. Մայրապետյանին պատկանող ՍՊ ընկերության կողմից չկատարելու պայմաններում համապատասխան հայցադիմումով դատարան դիմելու ընթացակարգ չի նախաձեռնել, որի հետեւանքով առանձնապես խոշոր չափերով՝ 178.464.591 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող անշարժ գույքն առանց իրավաչափ հիմքի դուրս է եկել պետության գույքային հաշվեկշռից:

Բացի այդ, նշված պաշտոնատար անձը կրկին նույն շահագրգռվածությամբ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Երեւանի Աբովյան 8 հասցեում գտնվող 638.2 քմ տարածքը ուղիղ վաճառքով օտարելու մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունները Ս. Մայրապետյանին պատկանող մեկ այլ ՍՊ ընկերության կողմից չկատարելու պայմաններում համապատասխան հայցադիմումով դատարան դիմելու ընթացակարգ չի նախաձեռնել, որի հետեւանքով առանձնապես խոշոր չափերով՝ 178.464.591 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող անշարժ գույքն առանց իրավաչափ հիմքի դուրս է եկել պետության գույքային հաշվեկշռից:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած անձին մեղադրանք է ներկայացվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (2 դրվագ):

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերն ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան»,- ասված է հաղորդագրությունում:

4 ՎԻՐԱՎՈՐ

Երեկ ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Եղվարդ-Աբովյան ավտոճանապարհին՝ Ջովունի վարչական տարածքում՝ ջերմոցների խաչմերուկում, բախվել են բեռնատար «Գազել»-ն ու «ՎԱԶ 2107»-ը:

Վթարի հետեւանքով 4 հոգի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Արմենիա» բժշկական կենտրոն: Վիրավորներին առաջինը օգնության են հասել քաղաքացիները, եւ, ըստ դեպքի վայրում հավաքված քաղաքացիների հայտնածի, օպերատիվ են գործել Եղվարդի հիվանդանոցի շտապօգնության բժիշկները, ովքեր վիրավորներին մինչեւ հիվանդանոց տեղափոխելը տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել: Բախման հետեւանքով բեռնատար «Գազել»-ը դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել ճամփեզրին տեղադրված 2 բետոնե պաշտպանիչ հենասյուներին, որոնցից մեկը շրջվել է ու հայտնվել երթեւեկելի գոտուց դուրս: Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վարորդների եւ վիրավորների ինքնությունը: Բեռնատար «Գազել»-ը պատկանում է «Էլնոր» ընկերությանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 27-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 181 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԲՌՆԱԳԱՆՁՎԻ 900 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

Էդվարդ Ֆրանգուլյանը 2024 թ. սեպտեմբերի 16-ին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ արդարացվածի վնասի հատուցման պահանջի մասին: Նա հայցադիմումում պահանջվող նյութական վնասի չափը նշել է 1 միլիոն դրամ, ոչ նյութական վնասի չափը՝ 1,5 միլիոն դրամ: Ֆրանգուլյանը որպես մեղադրյալ է ներգրավվել այն բանի համար, որ աշխատել է Իջեւանի ԲԿ-ում՝ որպես մանկաբարձագինեկոլոգիայի բաժանմունքում, որպես վարիչ, եւ 2017 թ. հուլիսի 14-ին կամ 15-ին հղիներից մեկի ծննդաբերության պատմության մեջ ակնհայտ կեղծ գրառումներ են կատարվել:

2020 թվականի հոկտեմբերի 13-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ: 2021 թ. հունիսի 17-ին վերաքննիչ քրեական դատարանը, մասնակիորեն բեկանելով առաջին ատյանի դատարանի հիշյալ որոշումը, գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Նոր քննության արդյունքում 2023 թ. փետրվարի 7-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանն այլ կազմով է. Ֆրանգուլյանի նկատմամբ կրկին կայացրել է արդարացման դատավճիռ՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Այս դատավճռի դեմ դատախազը վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2023 թ. դեկտեմբերի 21-ին վերաքննիչ քրեական դատարանը կայացրել է որոշում, որով դատախազի բողոքը մերժվել է, իսկ նշված արդարացման դատավճիռը թողնվել է անփոփոխ: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը 2024 թ. հունիսի 4-ին մտել է օրինական ուժի մեջ: Հայցադիմումում նշվել է, որ Է. Ֆրանգուլյանը 2019 թ. մայիսի 16-ից քրեական գործով, քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել է անօրինական քրեական հետապնդման մինչեւ 2024 թ. հունիսի 4-ը՝ արդարացման դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, նույն ժամանակահատվածում Ֆրանգուլյանը գտնվել է քրեադատավարական այնպիսի հարկադրանքի ներքո, ինչպիսին է «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը: Քրեական գործի վարույթն իրականացնող քննիչ Ս. Գասպարյանի միջնորդագրի հիմքով Է. Ֆրանգուլյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ հայտարարվել է խիստ նկատողություն: 2025թ. հունիսի 2-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը վճռել է Է. Ֆրանգուլյանի հայցը բավարարել մասնակի, ֆինանսների նախարարությունից հօգուտ Է. Ֆրանգուլյանի բռնագանձել 800 000 դրամ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցման գումար, ֆինանսների նախարարությունից հօգուտ Է. Ֆրանգուլյանի բռնագանձել 100 000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, ֆինանսների նախարարությունից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 24 000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԻՐԱՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻՆ

Իրանի արտգործնախարարության խոսնակ Էմայիլ Բաղաեին ճննադատել է Գերմանիային Իրանի դեմ վերջերս տեղի ունեցած իսրայելական ագրեսիայի վերաբերյալ դիրքորոշման համար՝ նշելով, որ կանցլեր Ֆրիդրիխ Մերցի արտահայտություններն հիշեցնում են Հիտլերի հանցագործությունների արդարացումները: Երկուշաբթի օրը կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, անդրադառնալով Գերմանիայի ներքին գործերի նախարարի՝ բռնազավթված պաղեստինյան տարածքներ կատարած այցին, Բաղաեին նշել է, որ Գերմանիայի եւ Ֆրանսիայի դիրքորոշումներն անընդունելի են:

Խոսնակը հատկապես քննադատել է Մերցի հայտարարությունն այն մասին, որ «Իսրայելը բոլորի համար ծանր աշխատանք է կատարում՝ հարվածելով Իրանին»: «Բոլորը գիտեն, թե ինչ է նշանակում այդ բառը: Չէի կարծում, որ Գերմանիայի կանցլերը կօգտագործի այնպիսի տերմիններ, որոնք կիրառվում էին Հիտլերի գործողություններն արդարացնելու համար», - ասել է Բաղաեին: Նա նշել է, որ նման դիրքորոշումը վտանգում է Եվրոպական միության հեղինակությունը:

Իրանի արտգործնախարարի տեղակալ Մաջիդ Թախթ Ռավանչին հերքել է Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ նոր բանակցությունների շրջանի մասին պնդումները: Կիրակի օրը խորհրդարանի Ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության հանձնաժողովի անդամների հետ հանդիպումից հետո Ռավանչին հայտարարել է, որ ամերիկյան պաշտոնյաների կողմից հնչեցված պնդումները բանակցությունների նոր փուլի վերաբերյալ իրականությանը չեն համապատասխանում: «Որեւէ պայմանավորվածություն բանակցությունների վերաբերյալ ձեռք չի բերվել», - նշել է փոխնախարարը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

«Հայաստանի Հանրապետությունում ուժգին հարված հասցվեց միավորող արժեքներին. հերոսաբար կռվողները վերածվեցին դասալիքների, Հերոս զինվորները՝ մեկուսացած հաշմանդամություն ունեցողների, Հերոսածին մայրերը՝ բողոքավոր որդեկորույսների, տարիներով պայքարող Արցախցիները՝ անտուն փախստականների, երիտասարդներն ու ուսանողները՝ չկողմնորոշված մոլորյալների, որոնց ապագայի տեսլականը Հայրենիքը լքելն է:

Բիզնեսը, մասնավոր ոլորտը վերածում են «քերելու» առարկայի, իսկ գործարարին՝ թշնամու: Դրանով այս իշխանությանը հաջողվեց գրեթե ամբողջությամբ ոչնչացնել երկրի ներքին ներդրումային մթնոլորտը: Այս ամենը բերեց վերջին յոթ տարիների ընթացքում առավելապես զրո հավելյալ արժեք արտադրող ընկերությունների ստեղծման, իսկ օտարերկրյա ներդրողների համար դարձանք ոչ հետաքրքիր եւ անհեռանկարային երկիր:

Ներկա իշխանություններն իրենց առաքելությունը պատվով կատարող լրագրողներին փորձեցին մեկուսացնել, հիմնավոր ճիշտ խոսքը կամ քննադատությունը փորձեցին զրոյացնել՝ փոխարենն աղբ լցնելով հանրային խոսքի հարթակներում: Կարողացան հայհոյանքի միջոցով վախի մթնոլորտ ստեղծել, նույնիսկ առաջին անգամ Հայ տղամարդն անզոր եղավ պաշտպանելու իր կնոջ եւ դստեր արժանապատվությունը:

Միանշանակ է, որ Հայաստանը դարձնելու ենք բարեկեցության երկիր, աղքատություն բառը թողնելու ենք անցյալում, եւ հանրային դաշտը հայհոյախառն աղբից մաքրվելու է:

Պայքարելու ենք:

Շարունակելի....»

ՍՏՈՒԳԱՅՑԵՐ՝ ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ

«Իրազեկում ճամբարականների համար» նախաձեռնության շրջանակներում Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Թագուհի Հակոբյանն այս անգամ այցելել է Հանքավանի «Արագած» եւ «Հեքիաթային կիրճ» ճամբարներ, որտեղ իրականացրել է իրազեկման սեմինար ճամբարական երեխաների, ինչպես նաեւ՝ անձնակազմի համար: Այցին մասնակցել են հիգիենիկ, սանիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային վերահսկողության վարչության պետ Աննա Հարությունյանը, արեւելյան տարածքային կենտրոնի բաժնի պետ Նելլի Աբրահամյանը:

Թագուհի Հակոբյանը ճամբարների անձնակազմի հետ քննարկել է Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներում գտնվող եւ ճամբարների գործունեությանն առնչվող օրենսդրական պահանջները, պարզաբանել է աշխատակիցների կողմից ներկայացված մի շարք հարցադրումներ:

Հետաքրքիր քննարկում է ծավալվել երեխաների հետ. վերջիններս ծանոթացել են Տեսչական մարմնի գործառույթներին, առավել կարեւորություն ունեցող վերահսկողական գործընթացներին, ինչպես նաեւ՝ ուսումնական հաստատություններին ներկայացվող օրենսդրական պահանջներին, որոնք անմիջապես առնչվում են երեխաներին: Անդրադարձ է կատարվել առանձին վարակիչ հիվանդությունների առաջացման եւ տարածման կանխարգելմանը: Քննարկումն ընթացել է երեխաների ակտիվ ներգրավմամբ՝ հարց ու պատասխանի միջոցով, որի ընթացքում Թագուհի Հակոբյանը շփվել է երեխաների հետ, պատասխանել նրանց հետաքրքրող բազմաբնույթ հարցերին:

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի շրջանակում պարզվել է, որ Կոտայքի մարզի Հանքավանի հյուրանոցային համալիրում անազատության մեջ պահվող արջի կեցության պայմանները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, եւ վայրի կենդանուն պահող անձը չունի լիազոր մարմնից համապատասխան թույլտվություն: Այս մասին տեղեկացնում է ԲԸՏՄ-ն:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում տեսչական մարմնի եւ շրջակա միջավայրի նախարարության համատեղ աշխատանքների շնորհիվ ապօրինի պահվող արջը տեղափոխվել է Վայրի բնության եւ մշակույթային արժեքների պահպանման հիմնադրամի վայրի կենդանիների խնամքի կենտրոն: Իրավախախտի նկատմամբ կկիրառվեն պատասխանատվության միջոցներ:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 48 պատահար, 3 մարդ մահացել է, 74-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐ՝ IDBank-ՈՒՄ

IDBank-ը կրկին հաճախորդների շնորհակալության օր է կազմակերպել, այս անգամ՝ Արաբկիր մասնաճյուղում: Սիրված ավանդույթը բանկն ամեն անգամ տանում է տարբեր մասնաճյուղեր՝ սպասարկվող հաճախորդների համար այդ օրը վերածելով տոնի:

Արաբկիր մասնաճյուղում հաճախորդներին անակնկալներն էին դիմավորում: Նրանք մասնակցում էին խաղարկությանը, շահում idcoin-ներ եւ հյուրասիրվում քաղցրավենիքով:

«Արաբկիր» մասնաճյուղի կառավարիչ Սուրեն Մելիքյանի խոսքով՝ թիմն արդեն հասցրել է սիրել այս փոքրիկ միջոցառումն ու այստեղ էլ անհամբերությամբ էին սպասում. «Թե՛ մեր թիմի, թե՛ հաճախորդների տրամադրությունը ողջ օրը կրկնակի բարձր էր տիրող մթնոլորտից: Սա հիանալի օրինակ է, որ մենք ոչ միայն ձգտում ենք սպասարկման լավագույն փորձառությամբ ապահովել մեր հաճախորդներին, այլ նաեւ այդ գործընթացը պարբերաբար դարձնել առավել հաճելի եւ անակնկալներով լի»,-ասաց Սուրեն Մելիքյանը:

IDBank-ի Հաճախորդների փորձառության մենեջեր Սեդա Ավագյանն էլ նշեց. «Մեր հաճախորդները մեր տարբեր նախաձեռնությունների ու անակնկալների միջոցով հաճախ են ստանում մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը, մենք էլ ամեն անգամ լսում ենք դրական հետադարձ կապ: Շնորհակալության օրվա ավանդույթը շարունակելով՝ եկել ենք Արաբկիր՝ եւս մեկ անգամ ընդգծելու, որ IDBank-ի կարեւոր առաքելությունը առաջին հերթին հաճախորդներին լավագույն սպասարկմամբ ապահովելն է: Օրը, իրոք, ստացված է այստեղ», - ասաց Սեդա Ավագյանը:

Ամենօրյա հերթական սպասարկումը այս անգամ տարբերվող դարձավ հաճախորդների համար. նրանք ուրախությամբ պտտում էին խաղարկության անիվը, շահում idcoin-ներ, ստանում նվերներ ու վայելում տարբերվող միջավայրը: Ստացած idcoin-ները հաջողակները կարող են օգտագործել ամենուր, ուր կա «Իդրամով» վճարում կատարելու հնարավորություն, այսինքն՝ ավելի քան 25.000 վաճառակետում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ՍՊՈՒՏՆԻԿ ԱԴՐԲԵՋԱՆ»-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Ոստիկանության աշխատակիցները գործողություն են իրականացրել «Սպուտնիկ Ադրբեջան»-ի գրասենյակում: Այս մասին ադրբեջանական լրատվամիջոցներին հաստատել են Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունից:

Նշենք, որ որոշ ժամանակ առաջ Ադրբեջանում դադարեցվել էր «Sputnik»-ի գործունեությունը: Նշվում է նաեւ, որ չնայած դրան, հայտնի է դարձել, որ գործակալությունը շարունակում է իր գործունեությունը, աշխատակիցները դուրս են գալիս աշխատանքի:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, Աշտարակ ք., Տիգրան Մեծի փողոց, 34 շենք, 15 հասցեում գտնվող 78.8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20780000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Դեմիրճյան փողոց, 16/1 հասցեում գտնվող 217.4 քմ բնակելի տուն, 21.4 քմ տնտեսական սենյակ, 18.5 քմ մառան, 3.4 քմ կաթսայատուն, 37.2 ք.մ. պահեստ, 12.5 քմ /25 խմ/ պարիսպ եւ 0.0717 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 46260000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Մյասնիկյան փողոց, 11 շենք, 42 հասցեում գտնվող 47,98 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Գ. Բաշինջաղյան փողոց, 2-րդ նրբանցք, 8 շենք, 13 հասցեում գտնվող 64,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26790000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Պատկանյան փողոց, 62/2 շենք, 36 հասցեում գտնվող 59,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17940000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, խ. Դաշտենցի փողոց, 9/1 հասցեում գտնվող 240,23 ք.մ. բնակելի տուն եւ 0,024307 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 48490000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Ջերմուկ, Ջերմուկ ք., Վարդանյան փողոց, 1 շենք, 14 հասցեում գտնվող 72,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամասի 4-րդ փողոց, 11/1 հասցեում գտնվող 235,25 ք.մ. բնակելի տուն, 16,6 քմ /36,52 խմ/ պարիսպ եւ 0,05195 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 102600000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Արցախյան խճուղի, 3 հասցեում գտնվող 211,7 ք.մ. խանութ եւ 0,028 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 30530000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Օձուն, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 7 հասցեում գտնվող 188,6 քմ բնակելի տուն, 21,2 քմ գոմ, 23,6 քմ գոմ եւ 0,082 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16500000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Պռոշյան, Ջ. Անդրանիկի փողոց, 5 շենք, 22 հասցեում գտնվող 51,6 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20400000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Ջվարթնոց Թաղամաս, Մայիսյան փողոց, 47 հասցեում գտնվող 137,8 քմ բնակելի տուն, 11,3 քմ կիսանկուղ, 19,9 քմ ավտոտնակ, 12,2 քմ թոնրատուն, 7,1 քմ թռչնանոց, 25,3 քմ ծածկ, 5 քմ ծածկ եւ 0,0975 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25300000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ էջմիածին ք., Սուրբ Մ. Խորենացու փողոց, 1 շենք, 22 հասցեում գտնվող 58,8 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22450000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Նորագավիթի 12-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 3 հասցեում գտնվող 86,6 ք.մ. բնակելի տուն եւ 0,070626 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40130000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Օրբելու փողոց, 91 շենք, 3 հասցեում գտնվող 78,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20400000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.07.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 15.08.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ՝ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

«Ֆասթ Շիֆթ» վճարահաշվարկային ընկերությունը թողարկել է «YoYo» բջջային հավելվածը, որը նախատեսված է 4-16 տարեկան երեխաների եւ դեռահասների համար:

Այսուհետեւ նրանք նույնպես կարող են անկանխիկ գումար ունենալ եւ անհպում վճարումներ կատարել 22.000+ վաճառակետերում, որտեղ տեղադրված են Idram-ի կամ Fast Shift-ի QR-ները: Բացի այդ՝ փոքրիկ եւ պատանի օգտատերերը կարող են վճարումներ կատարել այն օնլայն հարթակներում, որտեղ Fast Shift-ն ինտեգրված է որպես վճարամիջոց: YoYo հավելվածով հնարավոր է նաեւ գումար փոխանցել կամ ստանալ ընտանիքի այն անդամից, որի Fast Shift հաշվին կցվել է երեխայի էլ. դրամապանակը: YoYo-ի օգտատերը կարող է լիցքավորել իր հեռախոսահամարը, ինչպես նաեւ վարձակալել PowerFull՝ սմարթֆոնի կամ այլ սարքերի մարտկոցը լիցքավորելու համար:

YoYo էլեկտրոնային դրամապանակը ստեղծելու գործում առանձնահատուկ կարեւորվել է անվտանգությունը. օգտատիրոջ անձնական տվյալներն ու դրամական միջոցներն ապահովագրված են արտահոսքից կամ կորուստներից: Սա նաեւ ապահով միջոց է ծնողական վերահսկողության, այսինքն՝ գրանցման պահից մինչեւ հավելվածի օգտագործումը ծնողը կկարողանա հատուկ գործիքակազմի միջոցով տեսնել երեխայի օնլայն գործարքների պատմությունը եւ

ֆինանսական գործողությունները: Այդ նպատակով երեխան կարող է փոխանցումներ ստանալ միայն ընտանիքի անդամներից:

«Սա երեխաների առաջին քայլն է դեպի ֆինանսական անկախություն: YoYo-ի հետ նրանք կունենան տարբեր զեղչեր մի շարք վաճառակետերում, ինչպես նաեւ կսովորեն կառավարել իրենց ֆինանսական միջոցները: Մեր ընկերությունը մեծ ոգեւորությամբ է ներկայացնում նոր հավելվածը, որը նոր ու հետաքրքիր հնարավորություններ կստեղծի ինչպես մեր, այնպես էլ մեր պատանի օգտատերերի համար»,- ասել է «Fast Shift» ընկերության գործադիր տնօրեն Իրինա Գասպարյանը:

YoYo էլեկտրոնային դրամապանակը ներբեռնելու համար անհրաժեշտ է անցնել հետեւյալ հղումով:

Fast Shift-ը վճարահաշվարկային ընկերություն է, որը ֆինտեխ նոր լուծումների հիման վրա մատուցում է 400-ից ավելի ծառայություններ:

ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ 5 ԲԱԼ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՄԲ

Երեկ՝ տեղական ժամանակով ժամը 12:53-ին, ՆԳՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է հյուսիսային լայնության 39.54^{o} եւ արեւելյան երկայնության 44.52^{o} աշխարհագրական կոորդինատներով Իրան-Թուրքիա սահմանային գոտի՝ Մակու քաղաքից 28 կմ հյուսիս, օջախի 10 կմ խորությամբ, 3.9 մագնիտուդով երկրաշարժ: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությունից: Էպիկենտրոնային գոտում ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 5 բալ: Երկրաշարժը զգացվել է Արարատի մարզում՝ 4 բալ, Վայոց Ձորի մարզի Ելփին եւ Չիվա գյուղերում՝ 3 բալ, ինչպես նաեւ Երեւան քաղաքում՝ 2-3 բալ ուժգնությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՉԵՐՉԻԼԻ ՍԻՐԵԼԻ ԿՈՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

The Times-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

The Times-ի նորաձեւության տնօրեն Աննա Մերֆին խոսել է Հայաստանի կախարդական հմայքի՝ նրա հին եկեղեցիների, անսասան ավանդույթների եւ Չերչիլի սիրելի կոնյակի մասին:

«Հիմա «ոսկե ժամ» է լեռնային Դիլիջանում՝ Հայաստանի հարմարավետ քաղաքում: Ես թափառում եմ զառիթափ նրբանցքներում, որտեղ հին տները՝ փորագրված փայտե պատշգամբներով եւ բազմաշերտ վիտրաժներով, վերածվում են դիսկոտեկի լույսի փայլուն գնդիկների, որոնք արտացոլում են մայրամուտի մեղմ արեւի լույսը:

Այս տների մեծ մասը հեքիաթային խարխուլ տեսք ունի, ինչպես ֆիլմի նկարահանման հրապարակ կամ միսս Հավիշեմի տունը: Դրանցից մի քանիսը կարող են լքված լինել, կամ ոչ, միշտ չէ, որ պարզ է: Ինչպես հարեւան Վրաստանը, որտեղից ես եմ գալիս, Հայաստանը կորցնում է բնակչություն 1990-ականների սկզբից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո: Շատ երիտասարդներ մեկնում են արտասահման աշխատելու:

Բայց կար մի տուն, որի առջեւ ես կանգ առա՝ հիացմունքով նայելով դրան. բաց վարդագույն, ինչպես տիկնիկի տուն, փոքրիկ այգիով, որը խեղդվում էր քաջվարդերի մեջ: Տունն ինքնին հազիվ էր դիմանում, բայց ծաղկանոցները կատարյալ էին: Մի քանի րոպե անց ոչ մի տեղից մի ծերունի հայտնվեց եւ ինձ ծաղիկների մի փունջ մեկնեց: Ես տեսա նրա կնոջը պատուհանի մոտ. նա նայում էր մեզ եւ ժպտում:

Մենք չէինք կարողանում խոսել. նա անգլերեն չգիտեր, իսկ ես՝ հայերեն:

Պատմության քմահաճույքների պատճառով մենք տարբեր աշխարհներից էինք, կամ նույնիսկ տարբեր դարաշրջաններից: Նրա հագուստը նույնքան հին էր թվում, որքան ինքը, որքան նրա տունը եւ բակում կայանված հին «Զապորոժեցը»: Տեղացի մի բնակիչ ավելի ուշ ինձ կպատմի, որ ձկնորսության օրերին «Զապորոժեցների» վարորդները կարող էին հատակին լյուկ բացել եւ ձկնորսություն անել սառած լճի վրա: (Չնայած նա կավելացնի. «Այս մեքենան սարսափելի է, բոլորը գիտեն. փոխանցման տուփը փչանում է 10 հազար կմ-ից հետո, շարժիչը՝ 30-ից հետո»):

Սա իմ առաջին երեկոն է Հայաստանում՝ Կովկասում երկշաբաթյա ճանապարհորդության երրորդ երկրում: Ես սկսեցի Ադրբեջանից, հետո եղա Վրաստանում, իսկ հիմա՝ Հայաստանում: Ասիայի եւ Եվրոպայի ծայրամասերի միջեւ այս օղակը հետաքրքրաշարժ է. ամենուրեք կարելի է զգալ Արեւմուտքի, Արեւելքի եւ նախկին խորհրդային դպրոցի ազդեցությունը, բայց յուրաքանչյուր կետում ամեն ինչ տարբեր է զգացվում: Նույնիսկ հյուրանոցներն են արտացոլում դա. Վրաստանում եւ Հայաստանում՝ նորաձեւ բուտիկ հյուրանոցներ, Ադրբեջանում՝ վայրեր, որոնք, կարծես, պահպանվել են խորհրդային ժամանակներից:

Այնտեղ ես նաեւ լսեցի չորս տեղացի երգիչների կողմից հայկական ժողովրդական երգերի պատահական կատարում. նրանց ձայները, ինչպես լուսարձակը, թռչում էին հին դամբարանների վրայով: Հայերը հպարտանում են իրենց երաժշտությամբ, բայց ավելի շատ՝ իրենց կոնյակով: Առաջին բանը, որ նրանք ինձ ասացին սահմանին. «Չերչիլը պաշտում էր հայկական կոնյակը»:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԻՆՉ Է ՆԱԽԱՏԵՍՈՒՄ «ԲԱՐՍԵԼՈՆԱՆ»

«Բարսելոնան» նախատեսում է բաժանվել թիմի գերմանացի դարպասապահ Մարկ-Անդրե տեր Շտեգենից, սակայն վերջինս չի շտապում հեռանալ: Կատալոնական ակումբն այլեւս գերմանացուն չի դիտարկում որպես հիմնական դարպասապահ եւ արդեն պայմանագիր է կնքել «Էսպանյոլից» Ժոան Գարսիայի հետ: Լրագրող Ֆեռնանդո Պոլոյի տեղեկություններով՝ «Բարսելոնայի» տնօրենների խորհրդի բազմաթիվ անդամներ կարծում են, որ տեր Շտեգենին պետք է զրկել ավագի թեւկապից՝նույնիսկ այն դեպքում, եթե նա շարունակի մնալ թիմում: «Կապտանռնագույնների» ղեկավարության որոշմամբ՝ Ֆրենկի դե Յոնգից, Ռաֆինյայից, Ռոնալդ Արաուխոյից եւ Պեդրիից կազմված ավագների թիմը պետք է համալրի նաեւ Ինիգո Մարտինեսը:

ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՊԱԳԱՆ՝ ԻՆՏԵՐՈՒՄ

Իտալական FCInterNews կայքի տեղեկություններով՝ «Ինտերը» Աշխարհի ակումբային գավաթից հետո կորոշի մի քանի փորձառու ֆուտբոլիստների, այդ թվում՝ Հենրիխ Մխիթարյանի ապագան: Չնայած թիմի երիտասարդացման քաղաքականությանը՝ Մխիթարյանը շարունակում է կարեւոր դեր խաղալ: Նախորդ մրցաշրջանում «Ինտերը» Սերիա Ա-ի ամենատարեց կազմն ուներ, սակայն նոր սեփականատեր Oaktree Capital-ը ցանկանում է նվազեցնել թիմի միջին տարիքը՝ ճանապարհը տալով երիտասարդներին: Այնուամենայնիվ, Աշխարհի ակումբային առաջնությունը ցույց տվեց, որ Մխիթարյանի նման փորձառու խաղացողները դեռ արժեքավոր են: Նա մասնակցել է երեք հանդիպումներից երկուսին որպես հիմնական կազմի խաղացող, իսկ մեկում փոխարինման է դուրս եկել:

Թեեւ երիտասարդներ Ֆրանչեսկո Պիո Էսպոզիտոն, Վալենտին Կարբոնին, Պետար Սուչիչը եւ Լուիս Հենրիկեն աչքի են ընկել, գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուն վստահել է Մխիթարյանին կարեւոր պահերին: FCInterNews-ի տվյալներով՝ ի տարբերություն Ֆրանչեսկո Աչերբիի, ում հեռանալու մասին խոսակցություններ կան, եւ Մատեո Դարմիանի, որն, ամենայն հավանականությամբ, կմնա որպես ռեզերվային խաղացող, Մխիթարյանի դիրքն ավելի կայուն է:

Չնայած Պետար Սուչիչի տրանսֆերով կիսապաշտպանությունում մրցակցության աճին եւ Մխիթարյանի խաղաժամանակի հնարավոր կրճատմանը՝ «Ինտերը» ցանկանում է պահպանել նրան: Նրա փորձն ու պրոֆեսիոնալիզմը բարձր են գնահատվում, հատկապես երիտասարդ խաղացողների զարգացման համար:

ԺԱՄԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԻՆԵՐԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ

Հայաստանը շարունակում է վստահորեն ամրապնդել իր դիրքերը համաշխարհային գինու քարտեզի վրա: Հեղինակավոր միջազգային մրցույթում՝ Concours Mondial de Bruxelles 2025-ում, երկու հայկական գինիներ արժանացել են բարձր մրցանակների՝ հաստատելով, որ հայկական գինեգործությունն ունի մեծ ապագա: Մրցույթի բարձրագույն մրցանակը՝ Grand Gold Medal-ը, ստացել է 130 Reserve Areni 2019-ը, իսկ Sardapati Reserve 2019-ը Հայաստանին բերել է արծաթե մեդալ: Երկու գինիներն էլ Ոսկեհի գինու գործարանի պտուղներն են, հնագույն մշակույթի վերածնունդ, Վայոց ձորի խաղողի այգիների եւ հայրենի հողի նկատմամբ սիրո արդյունք: Concours Mondial de Bruxelles-ը աշխարհի ամենամեծ եւ ամենահեղինակավոր գինու մրցույթներից մեկն է: Ամեն տարի այնտեղ մրցում են տասնյակ երկրներից հազարավոր գինիներ, եւ միայն մի քանիսն են ճանաչվում միջազգային ժյուրիի կողմից: Հայկական գինիների հաղթանակը նման ասպարեզում հաստատում է, որ Հայաստանը գիտի ոչ միայն պահպանել դարավոր գինեգործական ավանդույթները, այլեւ ստեղծել համաշխարհային ճանաչման արժանի խմիչքներ:

ԵՐԲ Է ՆՇՎՈՒՄ ՎԱՐԴԱՎԱՌԸ

Վարդեվառը, (Քրիստոսի այլակերպություն կամ Քրիստոսի պայծառակերպություն) հայ ժողովրդական նախաքրիստոնեական եւ քրիստոնեական տոնն է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս տարի այն նշվելու է հուլիսի 27-ին՝ կիրակի: Վարդավառը հայկական ավանդական տոների շարքում ամենասիրելիներից մեկն է, ամառային ամենասիրված տոնը: Քաղաքներում Վարդավառն ավելի շատ համարվում է մանկական տոն, երեխաները հենց այդպես էլ ասում են՝ «ջրոցի խաղալ» կամ «Վարդավառ խաղալ», այսինքն՝ ուրախությամբ ջրել անծանոթներին եւ անցորդներին: Վարդավառի տոնին նախորդում է շաբաթապահք: Իսկ հաջորդ օրը, ինչպես տաղավար բոլոր տոներից հետո, Մեռելոց է. բոլոր եկեղեցիներում ննջեցյալների հոգիների համար մատուցվում է Ս. Պատարագ եւ կատարվում հոգեհանգիստ:

ԿԴԱԴԱՐԵՑՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

01.07.2025թ.-ից «Օպերա» մասնաճյուղը կդադարեցնի իր գործունեությունը:

Տեղեկացնում ենք, որ 2025թ. հուլիսի 1-ից «Յունիբանկի» «Օպերա» մասնաճյուղը /հասցե՝ Երեւան, Սայաթ Նովա 1/ կդադարեցնի իր գործունեությունը: Մասնաճյուղի ակտիվները եւ պարտավորությունները կփոխանցվեն «Յունիբանկի» «Մոսկվա» մասնաճյուղին /հասցեն՝ Երուան, Աբովյան 18/: «Յունիբանկի» մասնաճյուղերի հասցեներին եւ աշխատաժամերին կարող եք ծանոթանալ՝ այցելելով www.unibank.am կայքը: Տեղեկատու կենտրոն՝ +374 10 71 22 22, +374 10 59 55 55:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● *Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, հուլիսի 4-ին տեղի կունենա «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հեսարfրfիr է իմանալ. ցանկացած մարդ, ով հավատում է, կարո՞ղ է քարոզել եւ տարածել Աստծո խոսքը, թեեւ գիտեմ, որ դրա համար երկար տարիներ ուսում են ստանում եւ ձեռնադրվում մեր եկեղեցու քահանաները:

Համլետ Պետրոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Յուրաքանչյուր մարդ կարող է Աստծո խոսքը տարածել, բայց ոչ հռչակել իրեն միակ եւ ճիշտ քարոզիչ եւ ճշմարտություն ուսուցանող հոգեւոր հովիվ: Կարելի է բարեկամներին, հարեւաններին բացատրել քրիստոնեական ճշմարտությունը, որով եւ կատարվում է սրբազան պարտականություն: Այսօր հովիվ եւ քարոզիչ դառնալը միայն հոգու կանչով չպետք է սահմանափակվի: Քանի որ այս դարը ինֆորմացիայի դար է, ապա քարոզիչը պետք է հսկայական ինֆորմացիայի տիրապետի, որպեսզի ոչ միայն կարողանա Աստծո խոսքը փոխանցել, այլեւ այդ խոսքը մատչելի դարձնել ցանկացած խավի եւ ցանկացած մասնագիտության տեր մարդու: Իսկ դրա համար տարիներ են պետք, որպեսզի անհատից հզոր քարոզիչ ձեւավորվի:

Ուստի, քարոզիչը ոչ միայն հավատացյալ անձ պետք է լինի, այլ նաեւ համապատասխան կրթություն ստացած անհատ, որպիսիք են այսօր Հայ եկեղեցու հոգեւոր սպասավորները: Սա չի նշանակում, որ եթե մեկը ցանկություն ունենա Հայ եկեղեցու վարդապետությունն իր մտերիմին կամ բարեկամին հասցնել, չունի դրա իրավունքը: Նա կարող է այդ մարդուն եկեղեցի բերել, ծանոթացնել հոգեւոր հովվի հետ՝ հորդորելով մշտապես հոգեւոր խորհուրդներ ստանալ: Սա նույնպես ծառայություն է Աստծուն:

Օրինությամբ՝ Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Չնայած ներկայացված պատասխանին՝ փաստ է, որ յուրաքանչյուրն իրավունք ունի Աստծու խոսքը լսելի դարձնել հանրությանը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով է փոխվում կենսաթոշակի տեսակը:

Գայանե Բարսեղյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի դիմելու դեպքում՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակի տեսակը փոխվում է, եթե կենսաթոշակառուն ունի կենսաթոշակի այն տեսակի իրավունքը, որի համար դիմել է:

Արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից նրա կենսաթոշակի տեսակը փոխվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակի՝ անկախ կենսաթոշակառուի դիմելուց:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակը արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի փոխվել չի կարող:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հետեւյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափին գումարվում է մահացած կերակրողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ոստիկանության աշխատակիցները քաղաքապետարանի աշխատակիցների հետ երեկ ապամոնտաժում էին «Տաշիր» առեւտրի կենտրոնին փակցված բարերար Սամվել Կարապետյանի պատկերով լուսանկարներն ու «Ազատություն Սամվել Կարապետյանին» գրությամբ պաստառները: Ոստիկանները հրագանգ էին ստացել պաստառներն ամեն գնով հեռացնելու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 7 + 11 +25 + 29
	Կոտայքի լեռներ	+ 6 + 11 +25 + 28
	Կոտայքի նախալեռներ	+17 + 19 +29 + 33
	Գեղարքունիք	+ 9 + 14 +26 + 29
	Լոռի	+ 9 + 14 +27 + 29
	Տավուշ	+11+ 13 +26+ 30
	Արագածոտնի լեռներ	+ 9 + 11 + 25+ 28
	Արագածոտնի նախալեռներ	+16 + 19 + 30+ 32

	Արարատ	+16 + 19 +25 + 30
	Արմավիր	+17 + 19 +29 + 32
	Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +25 + 28
	Վայոց ձորի նախալեռներ	+19 + 22 + 33 + 36
	Սյունիքի հովիտներ	+17+ 20 +27 + 30
	Սյունիքի նախալեռներ	+10+ 13 +27 + 31
	ԼՂՀ	+17+ 19 +30 + 34
	Երեւան	+25+ 27 +29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*